ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՆՁԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա

ք. Երևան «11» օգոստոս 2020թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջերմուկշին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Ստեփանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Շատին-Գետափ ջրանցքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվումեն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվումէ՝ 40 օր:
աշխատանքների կատարմանվերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իրհայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսվածտույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չիս կսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմիցկատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքայինժ ամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 ՄինչևՊատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերությունների այտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունքունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանք իարդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքումՊ ատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իրուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծինևձավալաթերթինհամապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնցպահպանումնանհրաժեշտէ աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նորժ ամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իրմիջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծային փաստաթղթերում /պայմանագրի N 2.1– Հավելվածում/:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնելՊ ատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գին ըկազմում է 25 549 992 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, որից 4 258 332 (չորս միլիոն երկու հարյուր հիսունութ հազար երեք հարյուր երեսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:Գ ինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքըչ ընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվողգ ումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլպայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	«Ջերմուկշին» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Վայոց Ձորի մարզ,ք. Ջերմուկ, Շահումյան 25
ՀՀ	էլ. փոստseno.stepanyan@mail.ru
ՀՎՀՀ 02555816	հեռ 093 77 77 49
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող	ՀՀ 2478000008010999
	ՀՎՀՀ 09000604
	տնօրեն
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ

Հավելված թիվ 1
«11» 08 2020թ. կնքված
ՋԿ–ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՇԱՏԻՆ-ԳԵՏԱՓ ՋՐԱՆՑՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ծավալաթերթ-Նախահաշիվ
«Շատին-Գետափ ջրանցքի նորոգում փոխարինելով վթարված 400գծ/մ երկարությամբ LR-80 տիպի երկաթ-բետոնյա կիսախողովակները նորերով»

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	2	3	4	5	6
	1.Շատին - Գետափ ջրանցքի վերականգնվողհատված N1				
	Հողային աշխատանքներ				
1.1	Ջրանցքի բերմայի մաքրում բուսականությունից	մ2	380.0	0,87	330,60
1.2	Ջրանցքի եզրով աճած ծառերի արմատահանում և քարշափոխադրում մինչև 100մ	հատ	32.0	2,62	83,84
1.3	Ծառերի տնկում	հատ	32.0	1,32	42,24
1.4	Ճանապարհի պրոֆիլավորում 3.5մ լայնությամբ	մ	190.0	1,75	332,50
1.5	V կարգի բնահողերի քանդում էքսկավատորով խրամուղու ստեղծումով, կողլցումով	մ^3	11.0	0,61	6,71
1.6	V կարգի բնահողերի քանդում ձեռքով փոսորակի ստեղծումով, 30% լցանյութ	մ^3	4.9	3,50	17,15
1.7	III կարգի լցանյութի քանդում ձեռքով փոսորակի ստեղծումով	մ^3	2.1	3,06	6,43
1.8	Կոպճավազե նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ., ներառյալ կոպճավազի արժեքը և մատակարարումը	մ^3	1.60	4,37	6,99
1.9	Հետլիցքի իրականացում ձեռքով օգտակար հանույթի ընտրովի փափուկ բնահողերով, տոփանումով	մ^3	13.00	1,32	17,16
1.10	Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում ձեռքով	մ^3	5.00	1,32	6,60
	Բետոնային աշխատանքներ				
1.11	Հավաքովի երկաթբետոնե ЛР-8տիպիվաքեր, B25, F150, W6, ամրանիծախսը 61.9կգ/մ3, կցամասերի ստեղծումով, ներառյալ վաքերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	24.64	105,40	2597,06

1.12	Հավաքովի երկաթբետոնե հենարան, 0,6x0,5x0,4 չափերի, B15, F150, W4, 3.3կգ/մ3 ամրանի ծախսով, ներառյալ սալի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	3.84	61,23	235,12
1.13	Հավաքովի երկաթբետոնե սալ, O-1 տիպի 0,6x0,5x0,4 չափերի, B15, F150, W4, 3.3կգ/մ3 ամրանի ծախսով, արժեք, մատակարարում	հատ	32	13,12	419,84
1.14	Անկյունային հորի հատակի ստեղծում միաձույլ բետոնից, B15, F150,W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	1.50	43,73	65,60
1.15	Անկյունային հորի պատերի կառուցում միաձույլ բետոնից, B15, F150,W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	3.50	61.224	214.286
	Վաքերի կարեր 75.48մ ներառյալ				
1.16	Բիտումա-պոլիմերային մածիկ, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	կգ	45.288	0,87	39,40
1.17	Ռետինե լարան, Ф2-2.5սմ, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	մ	75.48	0,52	39,25
1.18	Ցեմենտե շաղախ, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	մ3	0.60384	43,73	26,41
1.19	Սոսնձող մածուկ "ВХ", ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	կգ	4.9062	4,37	21,44
1.2	Բետոնե հենարանների քանդում կուտակումով, 30% մանրեցում	$մ^3$	1.4	7,00	9,80
1.21	Բետոնի թափոնների բարձում	$մ^3$	4.5	0,87	3,92
1.22	Քանդված բետոնի թափոնների ինքնաթափերով տեղափոխում մինչև 1կմ	տ	10.8	1,75	18,90
1.23	Հավաքովի երկաթբետոնե ЛР-տիպիվաքերիապամոնտաժ	մ3	24.64	5,25	129,36
1.24	Ապամոնտաժված վաքերի բարձում ինքնաթափ	տ	59.136	1,75	103,49
1.25	Ապամոնտաժված վաքերի ինքնաթափերով տեղափոխում 1կմ թափոնավայր պահեստավորումով	տ	59.136	1,75	103,49
	<u>Ընդամենը ըստ 1 բաժնի</u>				4877.58
	2. Միակողմանի ջրթող ՊԿ1+39 ջրանցքի հատված N1-ի համար				
	<u>Հողային աշխատանքներ</u>				
2.1	V կարգի բնահողերի քանդում էքսկավատորով խրամուղու ստեղծումով, կողլցումով	$մ^3$	4.7	0,70	3,29

2.2	V կարգի բնահողերի քանդում ձեռքով հատակի լրամշակում	մ^3	0.3	3,50	1,05
2.3	Փափուկ III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով ինքնաթափ	մ^3	1.3	0,52	0,68
2.4	Բարձած բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ նախապատրաստական շերտի և մասնակի հետլիցքի համար	տ	2.3	1,75	4,03
2.5	Նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ. ձեռքով բերովի փափուկ բնահողերով, տոփանումով	մ^3	0.30	1,32	0,40
2.6	Կոպճավազե նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ.	մ^3	0.40	1,32	0,53
2.7	Հետլիցքի իրականացում ձեռքով բերովի փափուկ բնահողերով, տոփանումով	մ^3	1.00	1,32	1,32
2.8	Հետլիցքի իրականացում բուլդոզերով օգտակարա հանույթի բնահողերով, տոփանումով	մ^3	5.00	1,32	6,60
2.9	Քարե չոր սալարկում 22սմ հաստությամբ պատրաստված հիմքի վրա, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ2	4.0	2,62	10,48
	Բետոնային աշխատանքներ				
2.10	Նախապատրաստական շերտ միաձույլ B7.5, F150, դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ^3	0.42	43,73	18,37
2.11	Միաձույլ բետոնե հորի հիմքի կառուցում B15, F150, դասի բետոնից, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	0.210	61,23	12,86
2.12	Հորի հատակի ստեղծում միաձույլ բետոնից, B15, F150,W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	0.42	52,48	22,04
2.13	Հորի պատերի կառուցում միաձույլ բետոնից, B15, F150,W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	2.30	61,23	140,83
	Մետաղական կոնստրուկցիաներ				
2.14	Φ219x4մմ պողպատե խողովակ, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	4.0	17,50	70,00
2.15	Փականներ ГС 40-100, իր վերհանով, փեղկով, արժեք, մատակարարում և տեղադրում	տ	0.0905	874,70	79,16
2.16	Դիաֆրագմա 500x500x4մմ պողպատե թերթից, արժեք, մատակարարում և տեղադրում	տ	0.0079	699,73	5,53

	Մեկուսիչ աշխատանքեր				
2.17	Φ200մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոկեկուսացում, նյութերի արժեք, մատակարարում	մ	3.4	1,75	5,95
2.18	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^2$	1	1,50	1,50
	Ընդամենը ըստ 2 բաժնի				**384.61**
	3.Շատին - Գետափջրանցքիվերականգնվողհատված N2				
	Հողային աշխատանքներ				
3.1	Ջրանցքի բերմայի մաքրում բուսականությունից	մ2	764.0	0,87	664,68
3.2	Ջրանցքի եզրով աճած ծառերի արմատահանում և քարշափոխադրում մինչև 100մ	հատ	50.0	2,62	131,00
3.3	Ծառերի տնկում	հատ	50.0	1,32	66,00
3.4	Ճանապարհի պրոֆիլավորում 3.5մ լայնությամբ	մ	382.0	1,75	668,50
3.5	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով խրամուղու ստեղծումով, կողլցումով	$մ^3$	9.0	0,61	5,49
3.6	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով փոսորակի ստեղծումով	$մ^3$	3.0	3,06	9,18
3.7	V կարգի բնահողերի քանդում էքսկավատորով խրամուղու ստեղծումով, կողլցումով	$մ^3$	38.0	0,70	26,60
3.8	V կարգի բնահողերի քանդում ձեռքով փոսորակի ստեղծումով, 30% լցանյութ	$մ^3$	9.1	3,50	31,85
3.9	III կարգի լցանյութի քանդում ձեռքով փոսորակի ստեղծումով	$մ^3$	3.9	3,06	11,93
3.10	Կոպճավազե նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ., ներառյալ կոպճավազի արժեքը և մատակարարումը	$մ^3$	3.20	4,37	13,98
3.11	Հետլիցքի իրականացում ձեռքով օգտակար հանույթի ընտրովի փափուկ բնահողերով, տոփանումով	$մ^3$	55.00	1,32	72,60
3.12	Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում ձեռքով	$մ^3$	8.00	1,32	10,56
3.13	Փափուկ III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով ինքնաթափ	$մ^3$	316.0	0,52	164,32
3.14	Բարձած բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ ճանապարհի լիրքի ստեղծման համար	տ	553.0	1,75	967,75

3.15	Ճանապարհի լիրքի ստեղծում բերովի փափուկ բնահողերից բուլդոզերով տեղափոխումով մինչև 20մ	մ^3	316.00	0,13	41,08
3.16	Ճանապարհի լիրքի խտացում 6-ոց գլդոնով, շերտի հաստ. 40սմ, երեք անցումով մեկ հետքի վրայով	մ^3	316.00	0,43	135,88
3.17	Ճանապարհի խճային ծածկույթի իրականացում 15սմ հաստ., ներառյալ խճի արժեքը, մատակարարումը	մ2	172.0	0,87	149,64
	Բետոնային աշխատանքեր				
3.18	Հավաքովի երկաթբետոնե ЛР-8տիպիվաքեր, B25, F150, W6, ամրանիծախսը 61.9կգ/մ3, կցամասերի ստեղծումով, ներառյալ վաքերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	51.59	118,27	6101,55
3.19	Հավաքովի երկաթբետոնե հենարան, 0,6x0,5x0,4 չափերի, B15, F150, W4, 3.3կգ/մ3 ամրանի ծախսով, ներառյալ սալի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	8.04	61,23	492,29
3.2	Հավաքովի երկաթբետոնե սալ, O-1 տիպի 0,6x0,5x0,4 չափերի, B15, F150, W4, 3.3կգ/մ3 ամրանի ծախսով, արժեք, մատակարարում	հատ	67	13,12	879,04
3.21	Անկյունային հորի հատակի ստեղծում միաձույլ բետոնից, B15, F150,W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	9.45	43,73	413,25
3.22	Անկյունային հորի պատերի կառուցում միաձույլ բետոնից, B15, F150,W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	22.05	57,90	1276,70
	Վաքերի կարեր 153.18մ ներառյալ				
3.23	Բիտումա-պոլիմերային մաստիկ, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	կգ	91.908	0,87	79,96
3.24	Ռետինե լարան, Ф2-2.5սմ, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	մ	153.18	0,52	79,65
3.25	Ցեմենտե շաղախ, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	մ3	1.22544	43,73	53,59
3.26	Սոսնձող մածուկ "ВХ", ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը	կգ	9.9567	4,37	43,51
3.27	Բետոնե հենարանների քանդում կուտակումով, 30% մանրեցում	մ^3	2.4	6,70	16,08
3.28	Բետոնի թափոնների բարձում	մ^3	8.0	0,87	6,96

3.29	Քանդված բետոնի թափոնների ինքնաթափերով տեղափոխում մինչև 1կմ	տ	19.2	1,75	33,60
3.3	Հավաքովի երկաթբետոնե ЛР-տիպի վաքերի ապամոնտաժ	մ3	51.59	5,00	257,95
3.31	Ապամոնտաժված վաքերի բարձում ինքնաթափ	տ	123.816	1,75	216,68
3.32	Ապամոնտաժված վաքերի ինքնաթափերով տեղափոխում 1կմ թափոնավայր պահեստավորումով	տ	123.816	1,75	216,68
	Մետաղական կոնստրուկցիաներ				
3.3	Φ700մմ պողպատե կիսախողովակների ապամոնտաժ	մ	6	3,50	21,00
3.3	Ապամոնտաժված խողովակների բարձում ինքնաթափ	տ	0.360	1,75	0,63
3.4	Ապամոնտաժված կիսախողովակների ինքնաթափերով տեղափոխում 1կմ թափոնավայր պահեստավորումով	տ	0.360	1,75	0,63
	Ընդամենը ըստ 3 բաժնի				13360,79
	Ընդամենը ըստ 1-3 բաժինների				18622,986
	Շահույթը 11%				2048,528
	Ընդամենը՝ շահույթով				20671,514
	Չնախատեսված ծախսեր 1.5%				310,073
	Չնախատեսված ծախսեր 1.5% /հատկացվում են համապատասխան հիմնավորումների հիման վրա/				310,073
	Ընդամենը՝ չնախատեսված ծախսերով				21291,660
	ԱԱՀ 20%				4258,332
	Ընդամենը՝ ԱԱՀ-ով				25549,992

* Կապալառուն աշխատանքները կատարում է՝ՀՀ Վայոց ձորի մարզում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջերմուկշին» ՓԲԸ
Վայոց Ձորի մարզ,ք. Ջերմուկ, Շահումյան 25
էլ. փոստseno.stepanyan@mail.ru
հեռ 093 77 77 49
Հ/Հ 2478000008010999
ՀՎՀՀ 09000604
տնօրեն

_____ Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«17» 08 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԱ ՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը (օրեր)
	Շատին-Գետափ ջրանցքի վերանորոգման աշխատանքներ	***ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու և ոռոգման շրջանի ավարտից հետո***	**40 օր**
1	Նախապատրաստականշրջան / ներառյալ ջրանցքիեզրերի մաքրում բուսականությունից և ծառերից/	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու և ոռոգման շրջանի ավարտից հետո*	15
2	Ճանապարհի պրոֆիլավորում		10
3	Ճանապարհի լիրքի ստեղծում խտացումով		2
4	Բնահողերի քանդում կողլցումով		0.35
5	Բնահողերի քանդում կողլցումով, ձեռքով		9
6	Նախապատրաստական շերտի ստեղծում կոպճավազից և բերովի փափուկ բնահողերի ցիարթեցումով		1.41
7	Պաշտպանիչ շերտի ստեղծում բերովի փափուկ բնահողերից, տոփանումով		11
8	Հետլիցքիհիրականացումմեխանիզմով, օգտակարհանույթիբնահողերից		0.003
9	Հավաքովի երկաթբետոնե վաքերի ապամոնտաժ		13.49
10	Հավաքովի երկաթբետոնե վաքերի և հիմքերի սալ իկների մոնտաժ		22.00
11	Միաձույլ բետոնի տեղադրում		13.28
12	Այլ աշխատանքեր		10.00
13	Ծինաղբիմաքրում և հեռացում		3
ԸՆԴԱՄԵՆԸ			**40**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջերմուկշին» ՓԲԸ
Վայոց Ձորի մարզ,ք. Ջերմուկ, Շահումյան 25
էլ. փոստseno.stepanyan@mail.ru
հեռ 093 77 77 49
Հ/Հ 2478000008010999
ՀՎՀՀ 09000604
տնօրեն

_____ Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2.1
«11» 08 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացվածհամաձայն նախագծային փաստաթղթերում

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Ցեմենտ	այո	0.5
Ավազ	այո	1
Խիճ	այո	1
Պողպատ	այո	40
Հակակորոզիոն ներկ	այո	5
Հիդրոմեկուսիչ նյութ /բիտում/	այո	3
Ռետինե լարան	այո	3

Վերականգնվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիա /ՊՐ տիպի վաքեր/	20
Պողպատե խողովակ	40
Միաձույլ բետոնե կառուցվածք	20
Մետաղական կառուցվածք	25

Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջերմուկշին» ՓԲԸ
Վայոց Ձորի մարզ,ք. Ջերմուկ, Շահումյան 25
էլ. փոստseno.stepanyan@mail.ru
հեռ 093 77 77 49
Հ/Հ 2478000008010999
ՀՎՀՀ 09000604
տնօրեն
Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«11» 08 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի									
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241140/501	Ոռոգման ջրանցքների կառուցման աշխատանքներ - Շատին-Գետափ ջրանցքի վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջերմուկշին» ՓԲԸ
Վայոց Ձորի մարզ,ք. Ջերմուկ, Շահումյան 25
էլ. փոստseno.stepanyan@mail.ru
հեռ 093 77 77 49
Հ/Հ 2478000008010999
ՀՎՀՀ 09000604
տնօրեն

Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
« 11 » 08 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«11» 03 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն